

## ՀԱՅ ԵՐԱՇԽԵՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Ե. - ԺԵ. ԴԱԲ

Առողմանութեան նշանները թուով տասն  
են.

Եհշտ		Թաւ	
Բութ	~	Սոսկ	λ
Պարոյի	Թ	Ապաթարց	Չ
Սուզ	Օ	Ենթամնաց	Վ
Երկար	~	Ստորատ	Չ

Այս տասն նշանները բաժանուում են չորս  
սեռի:

1. Ոլորակ: — Անի երեք նշան՝ չետ, բութ,  
պարոյի:

ա. Եհշտը ցոյց է տալիս ձայնի բարձրա-  
ցումը կամ բարձր, սուր ձայն:

բ. Բութը չետի հակառակն է ցոյց տա-  
լիս. Հարթ, խազազ ձայն:

գ. Պարոյիը ցոյց է տալիս այս երկուսնի  
նշաններներեան գուգորդութիւնը, այսինքն  
ձայնի բարձրացումը (սրումը) և հարթե-  
ցումը (ինցումը):

2. Ամանակ: — Անի երկու նշան՝ սուզ և  
երկար:

ա. Սուզը ցոյց է տալիս կարճ վանկերն  
ու ձայնաւորները: Բնականից կարծ են հա-  
մարուել և, ո, և ձայնաւորները, ինչտես  
նաեւ ձայնաւորով վերջացող այս վանկերը,  
որոնց ձայնաւորը երկարբառ չէ և նրան  
բազումայն չի լավորուած:

բ. Երկարը ցոյց է տալիս երկար վանկերը:  
Բնականից երկար են համարուել և և ձայ-  
նաւորները և երկարբառները:

3. Հազար: — Անի երկու նշան՝ թաւե սոսկ:

ա. Թաւը ցոյց է տալիս բազաձամների  
թաւ, թանձր և խոչոր արտասանութիւնը,  
ինչպէս օրինակ թ, փ, ֆ:

բ. Սոսկը ցոյց է տալիս նրանց ողորի,  
յերկ արտասանութիւնը, օրինակ տ, պ, կ:

Թաւը նշում է նաեւ հնչիւնը, երբ դա ա-  
ռանձին պէտք է արտասանուի: Օրինակ՝  
կարսու, յարեաւ:

Զամշեանը իր «Քերականութիւն Հայկագ-  
եանց լեզուի» աշխատութեան մէջ գրում է.  
«Թաւն նշանակէր առ հինան վիսչորաձայն  
հնչումն այս տառից, որոց կան բժորմա-  
տառք նմանաձայնք, այլ նուրբ հնչմաքք: Սովորութիւնն խափան էարկ այսոցիկ»:  
Թաւը գործածութեան մէջ է մտել մթ. Դա-  
րից պիտեալ:

4. Կիրէ: — Անի երեք նշան՝ ապաթարց,  
կոթամնայ և սուրատ:

ա. Ապաթարցը դրւամք է ի նախդիրի  
դրայ, բարից անջատելու համար, ինչպէս  
և բարենչիւնութեան նպատակով ա ձայ-  
նաւորը զեղջելիս: Այս պատճառով էլ ըստ  
որոշ հեղինակների այցրաթարց է կոչում:

բ. Ենթամնան ցոյց է տալիս թէ կից բա-  
ռերը մէկ բառ են կազմում, ուստի միացեալ  
պէտք է արտասանել:

գ. Ստորատը դրւում է ցոյց տալու հա-  
մար հակառակը, թէ կից բառերը ոչ թէ  
մէկ, այլ երկու առանձին բառեր են հանդի-  
սանում, ուստի դրանք միմիանցից անջատ  
պէտք է արտասանել: (\*)

Արիստակչս գիրիչ առողմանութեան նշան-  
ների մասին ասում է. «... Է իսկ անգաւորը  
զերթողական զծիցդ կարգուած և զրազ-  
մացոյլ խմբիցդ շարուածք յոլովիւք բանիւք  
և բազմամուննայ բայիւք նոցին վերտա-  
ռութեամբ արտակերտել շաղկապելով զմի  
առ միոյ, որ ոք ոչ զանգաղեցի տքնել յի-  
մասսա յայս վարժաւոր, առ ի մակացու-  
թիւն զրոց Աստուածայնոյ, կարասչ ան-  
սայթաք տրոնէլ ըստ որոշման զահողա-  
կին, և դհանկաւոր, և զյողնամանեայ ըդ-

(\*) Բ. Աբայշան, «Հայկական Խաբային Նա-  
տագրութիւն», Երևան, 1959:

յեռահիւսիցն իսկ զյանդուածնն, առ ի մի-  
միանց սուրբ Թ յստակ բացատրելը։ Ապա  
թուոմ է առողանութեան հետեւեալ նշան-  
ները. Ժնկ և Տէր ունի զշեշտաւորն, գհենքն  
և գարցուկ, զքառս, և զլոյժ, զղարք և ըլ-  
դիր, զատոր և զիխաստոր, որ է ներքան-  
բութդ, զբացատո, զմիաստիք և զերկուա-  
տեք, որ ասի տուն, զպարոյկ, զենթամիայ  
և զդաշարձնն։<sup>(\*)</sup>

Առողանութեան նշաններից է յառաջա-  
ցել խարային նոտագրութիւնը՝ որպէսի  
այս արտայայտութիւնը Հիմնաւորենք, մէջ  
ենք բերում առողանութեան մի քանի նշան-  
ների ձայնային արժէքը, որ նրանք ունեցել  
են ճնում, այն ժամանակ, երբ տակալին  
խարային սիստեմը չէր հիմնաւորուել։ Եր-  
կարը, չշշտը և ոլորակը ձայնային զանա-  
դան բարձրութիւն և տերուութիւն ցոյց  
տալու հարաւորութիւն են ունեցել։ Երկար  
կոչուող առողանութեան նշանի միջոցով  
ցոյց է տրուել ընթերցանութեան ձայնի  
(վանկի ձայնաւորի) երկարացումը, երբ  
անհրաժեշտ է եղել նախադասութեան ի-  
մաստին համապատասխան նրա որեւէ ան-  
դամը առանձնայատուկ կերպով ընդգծել։  
Այսպէս է գործածուած երկարը.

«Եւ ասիցեն ժողովրդեանն թէ յարեաւ  
ի մեռլոց»

Եւ կամ՝

«Ա՛յ հրաշապործ բերան բերկրալի,  
Դու լուեցեր ի խաւելոյ»<sup>(\*\*)</sup>

Ը. Քարերում երկարը գործածուել է  
նաև չշշտի և ոլորակի փոխարէն։ օրինակ՝  
թուականների վրայ «զորի՞ր», «Հինգե-  
րի՞ր», «ուստի ճանաչեն զիս»։ Այս վեր-  
լինի մէջ երկարը օգտագործուել է հարցա-  
կան իմաստով և ոլորակի փոխարէն։ Մի  
խօսքով, երկարի նշանը դրուած է նախա-  
դասութեան բոլոր այն բառերի վրայ, ո-  
րոնք կարուալիս ցանկացել են ընդգծել, ա-  
ռանձնացնել, լինի դա ձայնը երկարացնե-  
լով, «բացականչելով», «ոլորելով» թէ

(\*) Ս. Միջիման, «Յամական Ազիեցութիւնը  
և Սրածշուութեան Տեսականի վրայ», Թիֆլիս,  
1914։

(\*\*) Գարեգին Կար. Ցովուեփեան «Խազրակիամբ  
կամ Պողոսիմ»։

«Նշանելով»։ Առողանութեան տարբեր ե-  
րանգները մէկ նշանով նշանակելը համար-  
աւոմ է առողանութեան խոզերի գործածու-  
թեան հնագոյն շրջանին բնորոշ յատկանիւ,  
ինչպէս և լեզուարանութեան մէջ մի բառի  
զանազան իմաստաւորումը ցոյց է տալիս  
նոյն պարագան։

Առողանութեամբ ընթերցանութեան մէջ  
ուրակակը ցոյց է տուել ձայնի տասիճանա-  
կան կամ թռչչային բարձրացումը մի ա-  
ւելի բարձր թոնի։ Օրինակ, Կոմիտասը  
ձայնանիշերով այսպէս է արտայայտել ոլո-  
րակի ժօտաւոր ինթոնացիան։



Կարելի է առնել նաեւ Աւետարանից մի  
օրինակ, որ մինչեւ այժմ էլ կարգացում է.  
«Կին դու, զի՞ լաս»։ Այս փոքրիկ օրինա-  
կում տեսնում ենք եւ չեշտի, եւ ոլո-  
րակի<sup>(\*)</sup> գործածութիւնը։ Այս նախազա-  
սութիւնը ձայնանիշերով մօտաւորապէս  
այսպէս կարելի է արտայայտել.



Մինչեւ այսօր էլ մի շարք քահանաներ  
նոյն ձեռով են երգում, առանց անդրադառ-  
նալու առողանութեան նշանների խոկական  
իմաստին։ «Բութը հայկական առողանու-  
թեան ինքնուրոյն նշանն է։ Կետադրական  
նման նշան աշխարհի մէջ մեզ յայտնի որեւէ  
լեզում չի գործածուել և այժմ էլ չի գոր-  
ծածոււմ»<sup>(\*\*)</sup>

Մոխաչ Քերթողն այսպէս է մեկնում.  
«Բութ, հարթ որ ոչ ի վեր և ոչ ի վայր»,  
իսկ Ս. Սինեցին՝ «Բուկ ասելին ըստ հար-

(\*) Ուրակակ կամ պարոյկ՝ առողանութեան խա-  
զերի մէջ միեւնոյն նշանին են վերաբերում։

(\*\*) Յ. Միջիարեան, «Երմանին», հանդէս,  
1958, էջ 54։

թութեան բթիւն այսինքն, որ Հարթ ձայնքն են ոչ յորդք և ոռոքը, այն բութ ասին, և լինի հարթ և բութ ձայնչ: Աւրեմ, բութը բնդ հանրապէս գործածուել է Հարթ և չեղարւուժ բառերի վրայ: Այստեղ մէջ ենք բարդում բառերի վրայ: Եթե մէջ մէջ ենք բարդում բառերի վրայ: Եթե մէջ մէջ ենք բարդում բառերի վրայ:

Հստ աւանդութեան, յոյների առողջական խազերի դիւտը վերագրում է Արխանցիան Բիւլանդացուն (180 Ն. Թ.): Սակայն յայսնի է որ առողջանութեան նշանները առաջին անգամ հնդիկներն են գործածել իրենց վետանութերը գրի առնելիս: Պատմում է նաև, թէ հնում հնդիկ ուսուցչերը

Նշանի անունը	Զեր	Գործ. ակիզը
Շեշտ	~ /	Թ. Դար
Պարոյկ	Չ Չ	ԺԱ. Դար
Երկար	~	ԺԱ. Դար
Սուզ	Ճ Ճ	ԺԱ. Դար
Թառ	Ճ Ճ	ԺԱ. Դար
Սոսկ	Ճ -	ԺԱ. Դար
Ապաթարց	Ճ	ԺԳ. Դար
Ենթամնայ	Ճ -	ԺԲ. Դար
Ստորատ	Ճ	ԺԳ. Դար
Թռեթ	Ճ Ճ ~	Թ. Դար

Պարոյկը հայերի ինքնուրոյն մտայդացումն է իր ձեւով և գործածութեամբ, որովհետեւ միւս լեզուներում չի նկատում այդպիսի նշան (Յ. Միթթարեան):

Առողջանութեան նշանները զարգանալով և տարբեր իմաստաւորութեամբ ստանալով կամաց-կամաց ձեւափոխում են և դառնում երաժշտական խազեր. օրինակ՝ երկարը դառնալով երկարացման, բացականչական նշան, սկսում է գործածուել այնպէս, ինչպէս երաժշտական խազերում, այն է՝ բոլոր պարբերութիւնների, իսկ շտփույքը բառագրաժշտական խազերը:

Իրենց աշակերտներին դրաճանաչում սովորեցնելիս, երբ արտասանելիս են եղել չեշտաւոր բառերը, իրենց զյուիլը վեր են բարձրացրել և հարթաճայն բառեր արտասանելին՝ զյուիները թեթև ցած են խոնարհել. ահա այս շարժումներից երեւան են եկել չեշտը և բութը (' ' ), որոնք յետագայում դառնում են առողջանութեան նշաններ և դրանցից էլ բիում են առողջանութեան միւս նշանները: Սրանք էլ զարգանալով, դարերի ընթացքում յառաջանում են լուսական պարբերութիւնների:

Հայկական խազագրութեան հիմքը, ուրիշն, պէտք է փնտուել մեր գերականութեան մէջ զանուող առողջանութեան նշան-

ներում։ Ստկայն բազմաթիւ կարծիքներ կան հայկական խաղերի ծագման մասին։ ա. «Լատինական» տեսակէտի հեղինակներ։

բ. «Բիւզանդական» տեսակէտի հեղինակներ։

գ. «Լատինա-Բիւզանդական» տեսակէտի հեղինակներ։

դ. «Վրացական» տեսակէտի հեղինակներ։

ե. «Հնդկական» տեսակէտի հեղինակներ։

Այս հեղինակները ընդհանրապէս օտարներ են եղել և իրենց տեսակէտները չեն հիմնաւորել, այսինքն հաստատուն գետնի վրայ չեն կանգնել։ Խոկ Սպիրիտոն Մելքոնի կամ կարծիքով, խաղերը Խաչատուր Տարօնեցու ձեռովով են մտել Հայաստան։ «Երաժշտական» խաղերի երր և ում ձեռքով մտած լինելը աւելի որոշ է, քան առողանութեանը։ Կիրակոս Գանձակեցին Խաչատուր Տարօնեցու մասին ասում է. «Սա երեր զիսազի ի կողման արեւելից զամարմին եղանակն ի մարմին-ածեւ-դարաբարեան ի մաստնոց, որ ցան ժամանակու չեւ էր սփռեալ ընդ աշխարհ։ Ուս եկեալ գրեաց և ուսոյց բազմաց՝ Ուրեմն, մինչեւ ԺԲ. Դարը այդ խաղերը դեռ մուտք չէն գործեէ մեր աշխարհը և առաջին մեղամ Խաչատուր Տարօնեցին է բերում։ Արեւելքից այդ խաղերը՝ անմարմին եղանակները մարմաւութեուս»։<sup>(\*)</sup>

Այս Մելքոնը Կիրակոս Գանձակեցու այս արտայայտութեանը լրջութեամբ չի մոտեցել։ Նա, ուղղակի բառերից ենելով, անմիջապէս յայտարարում է թէ Հայկական խաղերը Խաչատուր Տարօնեցին Արեւելքից բերեց, այն էլ ԺԲ. Դարում։ Այս արտայայտութիւնը սխալ է և անհիմն, որ

բովածեալ քնոր հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ երաժշտական խաղերի գրութիւնը Հայաստանում կիրառուել է Խաչատուր Տարօնեցուց շատ աւելի առաջ, և հետեւաբար սխալ են այն բոլոր ուսումնակրողները, որոնք հայկական խաղագրութեան սկզբնաւորումը դնելով ԺԲ. Դարում, այդ հիման վրայ բիւզանդական կամ լատինական ծագում են վերաբերել նրան։<sup>(\*\*)</sup>

Կիրակոս Գանձակեցու յիշատակութիւնը, թէ Խաչատուր Տարօնեցին Արեւելքից բերեց խաղերը, պէտք է հասկանալ այն իմաստով, որ Տարօնեցին ոչ թէ հնարեց կամ իրմով սկիզբ գրեց մեր խաղագրութեան, այլ բերեց (Հաւանաբար Կիլիկիայից, ուր փոխագրուել էին մեր թագաւորութիւնն ու կաթողիկոսութիւնը պատմական գիպուտածների բերումով) և զրի առաւ շարականների մեծ մասը, նաեւ իր հետ բերելով նոր յօրինուած շարականները (Ծնորհալու և արեւելեան վարդապետների)։

Հայկական խաղերի ծագման մասին մի նոր կարծիք է յայտնաւմ Փրօֆ. Վեշել (Վիեննայի Համալսարանի Արեւելեան խաղերի մանագէտ), թէ Հայկական խաղերը ծագում են առել Եւ.-Փ. Դարերում, և Հայկական խաղագրութիւնը աւելի հին է քան բիւզանդականը և թէ վերջինը Հիմնաւորած է Հայկականի վրայ։ Սակայն այսպիսի մի անդուսն արտայայտութիւն առանց փառերի հաղիւ թէ ճիշդ լինի, որովհետեւ հիմնակի չորս բոն ձայները յոյների մաս գոյութիւն ունեին։ Յոյները երաժշտական գետնի վրայ մեղանից առաջ էին։ Հաւանական է նաեւ որ ունենային խաղերը որոնց միջոցաւ արտայայտէին երաժշտական մտքեր։

(Շար. 2)

ԶՕՀՐԱԿՊ ՍՐԿ. ՇԱՄՄԵԼԵԱՆ

(\*) Ս. Մելքոնեան, «Յութիւնն Ազգեցւութիւնը Հայ երաժշտութեան Տեսուկամի վրայ»։

(\*\*) Բ. Արայիշեան, «Հայկական Խաղային Խաչատուրիմ»։